ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԻՆՅԱՆ

Կյանքից հեռացավ հայ ճարտարապետության երախտավոր Ալեքսանդր Սահինյանը։ Նրա մահվամբ սովետահայ ճարտարապետների ընտանիքը կորցրեց իր նվիրյալ գործիչներից մեկին, որն իր գիտական վաստակով, մարդկային բարձր արժանիքներով, մեղմանուշ բնավորությամբ արժանացել էր համընդհանուրի սիրուն ու հարգանքին։

Ալեքսանդր Արամի Սահինյանը ծնվել է 1910 թ. Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր գյուղում։ Թբիլիսիի 76-րդ հայկական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա 1926—1930 թթ., որպես ուսուցիչ, աշխատում է Թումանյանի շրջանի Ճոճկան գյուղում։ 1930 թ. կոմերիտմիության Ալավերդու շրջկոմի գործուղմամբ Ա. Սահինյանը ընդունվում է Երևանի նորաբաց շինարարական (հետագայում պոլիտեխնիկական) ինստիտուտի ճարտարապետության բաժինը։ Այդտեղ էլ 1932 թ. նա ընդունվում է ՍՄԿԿ շարքերը։ 1937 թ., ինստիտուտն ավարտելուց հետո, Ա. Սահինյանը աշխատանքի է անցնում «Հայպետնախագիծ» ինստիտուտում և զբաղվում պրակտիկ նախագծմամբ։

Հայրենական մեծ պատերազմի սկզբին Ա. Սահինյանը զորակոչվում է սովետական բանակ։ 1942—1943 թթ. նա, որպես 61-րդ հրաձգային դիվիզիայի հատուկ ուսումնական գումարտակի շտաբի պետ, մասնակցում է հայրենիքի պաշտպանության համար մղված ծանր մարտերին, վիրավորվում է և զորացրվում։

1943—1946 թթ., լինելով ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտ, Ա. Սահինյանը գրում է դիսերտացիոն աշխատություն՝ նվիրված վաղ քրիստոնեական Հայաստանի կարևորագույն հուշարձաններից մեկին՝ Քասաղի տաճարին։ 1952 թ. նա պաշտպանում է դիսերտացիան և ստանում թեկնածուի գիտական աստիճան։

1946 թ. Ա. Սահինյանը աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ արվեստի սեկտորում որպես կրտսեր գիտաշխատող։ 1953 թ. նա նշանակվում է արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի, իսկ 1958 թ. սեկտորի վարիչ և ավագ գիտական աշխատող (1963 թ.)։ Այս պաշտոնն էլ նա վարեց մինչև անժամանակ ընդհատված իր կյանքի վերջը։

Շուրջ 35 տարվա իր գիտահետազոտական գործունեության ընթացքում Ա. Սահինյանը հրատարակել է 50-ից ավելի աշխատություն՝ խոշոր ավանդ մուծելով հարազատ ժողովրդի հարուստ ճարտարապետական ժառանգության ուսումնասիրության և պրոպագանդման գործում։ Խոր ու ծանրակշիռ են նրա հետազոտությունները։ Մշտապես պրպտում և գիտական պրոբլեմների մեջ խորամուխ լինելու ընդունակ հետազոտողի աշխատությունների գերակշռող մասը նվիրված է հայկական ճարտարապետության կազմավորման, ազգային ավանդույթների ստեղծման կարևոր հարցերին։ Դրանց են նվիրված նրա «Քասաղի տաճարի ճարտարապետությունը» մենագրությունը (Երևան, 1955 թ.), «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» (Երևան, 1964 թ.) ծավալուն աշխատության համապատասխան գլուխները, Էջմիածնի Մայր տա-

ճարի, Երերույքի բազիլիկայի, Զովունիի եկեղեցու և վաղ քրիստոնեական շրջանի հայկական պաշտամունքային այլ հուշարձանների հետազոտությունները՝ շարադրված հնագիտական պեղումների ժամանակ ստացված կարևոր հայտնագործությունների նյութերով։

Իր աշխատությունների մեջ Ա. Սահինյանը հայ ճարտարապետության կազմավորման ու զարգացման տեղական ավանդույթների հետևողական լուսաբանման ուղիով ընթացավ, դրանով իսկ ամրապնդելով և ավելի հիմնավորելով իր մեծ ուսուցիչ Թ. Թորամանյանի դրույթներն այդ հարցում։ Հայ ճարտարապետության զարգացման տեղական ավանդույթները Ա. Սահինյանը իրավացիորեն տեսնում էր նախաքրիստոնեական շրջանի հայ ճարտարապետության մեջ։

Խորամուխ լինելով Հայաստանի անտիկ ճարտարապետության մեջ, նա մասնակցեց Գառնիի ամրոցի ճարտարապետության հետազոտությանը, վերջինիս նվիրելով բազմաթիվ հոդվածներ և մի մենագրություն, որն, ավա՜ղ, նրան վիճակված չէր հրատարակված տեսնել։ Գառնիի ամրոցի ուսումնասիրությունը պակվեց իր իսկ նախաձեռնությամբ և ղեկավարությամբ իրականացված հեթանոսական տաճարի ամբողջական վերականգնմամբ, որին նա չանդիր նվիրեց իր կյանքի շուրջ 10 տարիները։ Արդարև դա հանդիսացավ Ա. Սահինյանի գիտական սխրանքը, որով նա իր անունը առհավետ կապեց նշանավոր կոթողի անվան հետ։ Այդ աշխատանքի համար նա արժանացավ Հայաստանի հանրապետության պետական մրցանակի դափնեկրի բարձր պատվին (1975 թ.)։

Ա. Սահինյանը հետևողականորեն ու նվիրումով ծառայում էր նաև հուշարձանների պահպանության և վերականգնման կարևոր գործին։ Տարիներ շարունակ, որպես հուշարձանների պահպանության ու վերականգնման վարչության գիտամեթոդական խորհրդի և էջմիածնի Մայր աթոռի ճարտարապետա-շինարարական հանձնաժողովի անդամ, նա մասնակցել է բազմաթիվ հուշարձանների վերականգնման նախագծերի քննարկմանը։ Ա. Սահինյանը ջերմեռանդ օգնում էր նաև պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության աշխատանքներին, որի հանրապետական խորհրդի և նախագահության անդամն էր՝ ընկերության հիմնադրման օրից։ Նշելի է նաև նրա մանկավարժական գործունեությունը Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում։ Վերջին տարիներին, որպես պետական քննական հանձնաժողովի անդամ, նա մասնակցում էր վերականգնման մասնագիտացվող ճարտարապետների դիպլոմային նախագծերի պաշտպանությանը, դրանով իսկ նպաստելով այդ ուղղությամբ կադրերի պատրաստման շատ կարևոր գործին։

Ժողովրդի սրտում անմար են նրա նվիրյալ զավակների անունները։ Դրանց ավելացավ Ալեքսանդր Սահինյանը։

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ճարտարապետության դոկտոր